2021, № 2, 28-40 *Քաղաքացիական իրավունք*
https://doi.org/10.46991/BYSU:C/2021.12.2.028

ԽԱՂԵՐ ԵՎ ԳՐԱԶ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՎԱՀՐԱՄ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հոդվածում քննարկվում են Հայաստանի Հանրապետությունում լայն տարածում ունեցող շահումով խաղերի կազմակերպման հետ կապված հարաբերությունների իրավական կարգավորման առկա խնդիրները, խաղերի կազմակերպման մասին պայմանագրի իրավական բնույթի, խաղերի կազմակերպիչների և մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները, վեր են հանվում վերջիններիս իրավունքների դատական պաշտպանության առկա խնդիրները, ինչպես նաև քննարկվում են խաղամոլության կանխարգելման հետ կապված որոշ հարցեր:

Բանալի բառեր – *խաղերի, գրազի (մոլեխաղի), տոտալիզատորի և վիճակախաղի կազմակերպման պայմանագիր, խաղի կազմակերպչի իրավունքներ և պարտականություններ, խաղի մասնակցի իրավունքներ և պարտականություններ, իրավունքի դատական պաշտպանության խնդիրներ, պատասխանատու խաղ*

Շահումով խաղերի կազմակերպման ոլորտը ողջ աշխարհում տնտեսական գործունեության արագ զարգացող ճյուղերից է, որի եկամտաբերությունը, ինչպես նաև տրամադրվող շահումների չափը ներկայումս գերազանցում է մեկ տրիլիոն ԱՄՆ դոլարի շեմը[1]: Ոլորտի զարգացումը, մասնավորապես ինտերնետ շահումով խաղերի տարածումը վերջին տարիներին մեծապես պայմանավորված են սմարթֆոնների և համացանցի՝ հանրության լայն շերտերին մատչելի դառնալու, սոցիալական ցանցերի, դեմո խաղերի տարածվածության, ինչպես նաև համացանցում գովազդի գրեթե անարգել իրականացնելու հանգամանքներով: Հայաստանի Հանրապետությունում ներկայումս շահումով խաղերի ոլորտում մատուցվող ծառայություններից օգտվում են հարյուր հազարից ավելի ՀՀ քաղաքացիներ, իսկ նրանց տանուլ տված տարեկան գումարի չափը գերազանցում է երկու հարյուր միլիոն ԱՄՆ դոլարը:

Ներկայացված թվերը ակներևաբար ցույց են տալիս նշված հարաբերությունների տարածվածության մակարդակը, հանրության, տնտեսության համար կարևորությունը և դրանց ժամանակակից զարգացումներին համահունչ պատշաճ իրավական կարգավորման ենթարկելու անհրաժեշտությունը: Կարգավորում, որը ոլորտը կվերածի Հա-

[1] Տե՛ս H2 Gambling Capital reports, https://h2gc.com

յաստանի Հանրապետության համար օտարերկրյա ներդրումներ ապահովող ճյուղի, կնվազեցնի նմանատիպ ծառայություններից օգտվելու ՀՀ քաղաքացիների հետաքրքրությունը, հանրության խոցելի շերտերին առավելագույնս կպաշտպանի մոլեխաղերով զբաղվելու բացասական հետևանքներից, կհավասարակշռի ծառայություններից օգտվող անձանց և ծառայություններ մատուցող կազմակերպությունների շահերը, ինչպես նաև թույլ չի տա՝ ոլորտում շրջանառվող դրամական միջոցները արտահոսեն արտերկիր:

«Խաղ» բառը հայերենում բազմիմաստ է. համատեքստից կամ կոնկրետ իրավիճակից կախված՝ կարող է տարբեր կերպ մեկնաբանվել: Քաղաքացիական օրենսդրությամբ կարգավորվող ինստիտուտի տեսանկյունից՝ «խաղ» եզրույթի ներքո ներառվում են մոլեխաղերը կամ այսպես կոչված՝ ազարտային խաղերը (ֆրանսերեն՝ hazard – դիպված, պատահականություն, ռիսկ): «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» ՀՀ օրենքի[2] 2-րդ հոդվածում տրվում է շահումով խաղի հասկացությունը: Մասնավորապես՝ շահումով խաղ է ցանկացած մեքենայացված կամ կենդանի խաղը, որը որևէ կերպ ստեղծում է շահման հնարավորություն, կամ որևէ շահումով խաղի մասնակցելու հնարավորության ստեղծումը (որևէ կերպ մասնակցելու իրավունքի տրամադրումը, բացառությամբ ինտերնետ տոտալիզատորի) անմիջականորեն (խաղասրահում) և (կամ) ինտերնետ կամ նմանօրինակ ցանկացած գլոբալ համակարգի և ցանկացած համակարգված ցանցային կապուղիների միջոցով, բացառությամբ շարժական կապի երկրային ցանցի միջոցով մատուցվող տվյալների հաղորդման ծառայությունների և (կամ) կարճ հաղորդագրությունների միջոցով ինտերակտիվ խաղարկությունների: Շախմատ, շաշկի, նարդի, տիր, բիլիարդ և նմանատիպ սպորտային բնույթի խաղերը շահումով խաղ չեն հանդիսանում, բացառությամբ թղթախաղերի տեսակների:

Գրազը «Վիճակախաղերի մասին» ՀՀ օրենքի[3] 2-րդ հոդվ. 1-ին մասի 5-րդ կետում բնորոշվում է «տոտալիզատոր» եզրույթով և իրենից ներկայացնում է մոլեխաղի տեսակ, որի պարագայում մասնակիցը կանխագուշակում է խաղային, սպորտային, սոցիալապես նշանակալից իրավիճակի հնարավոր տարբերակը, ընդ որում, շահումը պայմանավորված է կանխագուշակման մասնակի կամ լրիվ համընկնումից տեղի ունեցած փաստով:

ՀՀ օրենսդրությամբ մոլեխաղի ինքնուրույն տեսակ են նաև վիճակախաղերը, որոնք «Վիճակախաղերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվ. 1-ին մասի 1-ին կետում բնորոշվում են որպես հրապարակային միջոցառումներ, որոնց ընթացքում կազմակերպիչը մասնակիցների միջև անցկացնում է վիճակախաղի շահումային ֆոնդի խաղարկություն, ընդ ո-

[2] Տե՛ս ՀՀՊՏ 2004.01.14/2(301), Հոդ. 5:
[3] Տե՛ս ՀՀՊՏ 2004.01.14/2(301), Հոդ. 7:

ռում՝ շահումները կախված չեն նրա գործողություններից և կամքից, այլ բացառապես արդյունք են պատահականության:

Հարկ է նշել, որ գործող օրենսդրությամբ իրավական կարգավորման է ենթարկվել մոլեխաղերի որոշակի խումբ միայն, օրինակ՝ լոտոն, խաղատներում, բուքմեյքերական կետերում, ինտերնետ հարթակներում շահումով խաղի կամ վիճակախաղի կազմակերպումը: Այլ խաղերի՝ օրենքով չկարգավորվածությունը չի նշանակում, որ օրենսդրական ուղղակի արգելքների բացակայության դեպքում այդպիսիք քաղաքացիական օրենսդրությամբ կարգավորվող հարաբերությունների շրջանակից դուրս են: Նման խաղերի մասնակիցների միջև առաջացող հարաբերությունները կարգավորվում են խաղերի և գրազ անցկացնելու մասին ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հատուկ նորմերով, ինչպես նաև քաղաքացիական օրենսգրքի ընդհանուր նորմերով:

Քննարկվող հարաբերությունների իրավական կարգավորմանը նվիրված նորմերը զետեղված են նորմատիվ իրավական տարբեր ակտերում: Առավել ընդհանրական իրավական կարգավորումները նախատեսված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի[4] 56-րդ գլխում: Մասնավորապես, խաղերի և գրազի կազմակերպմանը վերաբերող հարաբերությունների կարգավորմանը նվիրված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1039 և 1040 հոդվածները, որոնք կարգավորում են խաղերից և գրազից ծագող պարտավորությունների առաջացման հիմքերը, սուբյեկտների շրջանակը, խաղերի և գրազի կազմակերպման պայմանագրի էական պայմանները և այդ պարտավորություններից ծագող իրավունքների պաշտպանության կանոնները:

Վերը նշված հարաբերությունների կարգավորման հիմնական կամ հատուկ աղբյուրներն են «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» և «Վիճակախաղերի մասին» ՀՀ օրենքները, որոնցում հստակեցվում են շահումով խաղի, մեքենայացված խաղի, կենդանի խաղի, վիճակախաղի, տոտալիզատորի, խաղատան, խաղասրահի, խաղադրույքի, խաղի կազմակերպչի, խաղացողի և այս հարաբերությունների իրավական կարգավորման համար կարևոր նշանակություն ունեցող այլ հասկացությունների իրավական բնորոշումները, ինչպես նաև, խաղերի և գրազի կազմակերպման պայմանագրային հարաբերություններից զատ, կարգավորում են այդ հարաբերություններին նախորդող և ուղեկցող այլ քաղաքացիաիրավական, կազմակերպչական և վարչական հարաբերություններ: Այս հարաբերությունների կարգավորմանը վերաբերող իրավանորմեր են պարունակում «Լիցենզավորման մասին»[5], «Գովազդի մասին»[6], «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին»[7]

[4] Տե՛ս ՀՀՊՏ 1998.08.10/17(50):
[5] Տե՛ս ՀՀՊՏ 2001.08.08/26(158):
[6] Տե՛ս ՀՀԱԺՏ 1996/10:
[7] Տե՛ս ՀՀՊՏ 2008.07.02/41(631), Հոդ. 658:

ՀՀ օրենքները, ինչպես նաև ՀՀ կառավարության և լիազոր մարմնի մի շարք որոշումներ և հրամաններ, օրինակ՝ ՀՀ ֆինանսների նախարարի 05.05.2020 թ. թիվ 128-ն հրամանը «Խաղասրահ մուտք գործել և ինտերնետային կայքում գրանցվել ցանկացող ֆիզիկական անձի անձը հաստատող փաստաթուղթն ստուգելու կարգը հաստատելու մասին»[8], ՀՀ կառավարության 17.09.2020 թ. թիվ 1531-ն որոշումը «Վիճակախաղի կամ անմիջականորեն տոտալիզատորի յուրաքանչյուր կազմակերպչի բուքմեյքերական գրասենյակի կամ անմիջականորեն (խաղասրահի միջոցով) տոտալիզատորի կազմակերպման գործունեության իրականացման վայրի՝ կրթական և պատմամշակութային օջախներից, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերից, հիվանդանոցներից հեռավորությունը և չափանիշները հաստատելու մասին»[9] և այլն:

Խաղերի և գրազի կազմակերպման հարաբերություններից պարտավորությունների ծագման հիմք է կազմակերպչի և մասնակցի կամ մասնակիցների միջև կնքվող պայմանագիրը: Խաղի տեսակով, ձևով և սուբյեկտային կազմով պայմանավորված՝ պայմանագիրը կարող է լինել ինչպես կոնսենսուալ, այնպես էլ՝ ռեալ: Օրինակ՝ խաղասրահում, կամ ինտերնետ տոտալիզատորում շահումով խաղի կամ տոտալիզատորի մասնակցելու համար կնքվող պայմանագիրը ռեալ է, քանի որ մասնակիցը պարտավոր է խաղադրույք կատարել, ինչը խաղին մասնակցելու պարտադիր պայման է: Փոխադարձ համաձայնության կայացումը բավարար պայման չէ, այլ անհրաժեշտ է համապատասխան խաղադրույքի կատարում, որից հետո միայն պայմանագիրը կհամարվի կնքված: Իսկ եթե երկու ֆիզիկական անձինք ֆուտբոլային խաղի ելքի վրա գրազ գան, ապա այս պայմանագիրը կհամարվի կնքված օրենքով սահմանված ձևով համաձայնություն կայացնելու պահից, այսինքն՝ նման պայմանագիրը կհամարվի կոնսենսուալ:

Խաղերի և գրազի կազմակերպման պայմանագիրը համարվում է հատուցելի պայմանագիր, քանի որ մեկ կողմի կատարած խաղադրույքին համապատասխանում է կազմակերպչից շահումի ձևով որոշակի գույքային բարիք ստանալու հնարավորությունը: Կատարված խաղադրույքի դիմաց շահում ստանալու հանգամանքը հենված է զուտ հավանականության վրա, այդ իսկ պատճառով տեսության մեջ նման պայմանագրերն ընդունված է դասել այսպես կոչված ռիսկային (ալեատորային) պայմանագրերի շարքին[10], ինչպես նաև այն պայմանով պայմանագիր է, քանի որ շահելու կամ պարտության հնարավորությունը վրա է հասնում միայն որոշակի պայմանի ի հայտ գալու արդյունքում:

---

[8] Տե՛ս ՀՀԳՏ 2020.05.15/16(684), Հոդ. 105:

[9] Տե՛ս arils.am, 2020.09.07-2020.09.20, պաշտոնական հրապարակման օրը՝ 18.09.2020:

[10] Տե՛ս **Сергеев А. П.** Гражданское право, 2010, https://be5.biz/pravo/g014/52.html:

Խաղի տեսակից և սուբյեկտային կազմից կախված՝ պայմանագիրը կարող է լինել միակողմ կամ երկկողմ, իսկ կազմակերպման ձևի առանձնահատկություններից կախված՝ պայմանագիրը կարող է լինել խառը: Օրինակ՝ ինտերնետ շահումով խաղի կամ ինտերնետ տոտալիզատորի կազմակերպման պայմանագիրը ներառում է նաև մասնակցի դրամական միջոցների պահատվության (դեպոզիտի) և շահումով խաղի կամ գրազի կազմակերպման պայմանագրերին վերաբերող պայմաններ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ խաղերը հիմնականում կազմակերպվում են համապատասխան լիցենզիա ստացած առևտրային իրավաբանական անձանց կողմից, խաղերի կազմակերպման հիմնական պայմանները հաստատում է լիազոր մարմինը, ուստի նման պայմանագրերը համարվում են միանալու պայմանով պայմանագրեր, սակայն իրենց բնույթով հրապարակային պայմանագրեր չեն, քանի որ կազմակերպիչը իրավունք ունի իր հայեցողությամբ, առանց պատճառաբանության հրաժարվելու այս կամ այն սուբյեկտի հետ պայմանագրային հարաբերությունների մեջ մտնելուց:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1040 հոդվ. 3-րդ մասի համաձայն՝ պայմանագրի էական պայմաններն են խաղերի անցկացման ժամկետի, շահումը որոշելու կարգի և դրա չափի մասին պայմանները: Խաղերի կազմակերպչի կողմից սահմանված ժամկետում դրանք անցկացնելուց հրաժարվելու դեպքում խաղերի մասնակիցներն իրավունք ունեն կազմակերպչից պահանջելու խաղերի վերացմամբ կամ դրանց ժամկետի հետաձգմամբ պատճառված իրական վնասի հատուցում: Վիճակախաղ, տոտալիզատոր կամ այլ խաղեր անցկացնելու կանոններին համապատասխան՝ խաղի կազմակերպիչը շահած անձանց պետք է վճարի նրանց շահումը խաղեր անցկացնելու կանոններով նախատեսված չափով, ձևով (դրամով կամ բնեղենով) և ժամկետում, իսկ եթե այդ կանոններում ժամկետը նշված չէ, ապա խաղերի արդյունքները որոշելու պահից ոչ ուշ, քան տասն օրում: Ոլորտը կարգավորող օրենսդրության վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ պայմանագրի գինը ևս պայմանագրի էական պայման է, ինչը, խաղադրույքի ձևից և տեսակից կախված, կարող է փոփոխվել, կազմակերպչի կողմից կարող են սահմանվել խաղադրույքների առավելագույն և նվազագույն չափեր:

Պայմանագրի ձևի նկատմամբ կիրառելի են գործարքի ձևին ներկայացվող ընդհանուր կանոնները, եթե այլ առանձնահատկություններ սահմանված չեն այս հարաբերությունները կարգավորող հատուկ օրենքներով: Մասնավորապես, պայմանագիրը կնքված է համարվում վիճակախաղի տոմս[11], անդորրագիր կամ այլ փաստաթուղթ տալով, կամ կազմակերպչի սերվերների վրա էլեկտրոնային գրանցումներ կա-

[11] Հարկ է նշել, որ շահած վիճակախաղի տոմսը իր իրավական բնույթով հավասարեցվում է ներկայացնողի արժեթղթին:

տարելու ձևով: Այս ձևերով հաստատվում է պայմանագրի կնքման փաստը, իսկ պայմանագրի պայմանները առավել մանրամասն արտացոլվում են կազմակերպչի ինտերնետային կայքում, ինչպես նաև լիազոր մարմնի կողմից հաստատվող տարատեսակ կարգերում, կանոնակարգերում, ներքին իրավական այլ փաստաթղթերում:

Պայմանագրի կողմեր են խաղի կազմակերպիչը և խաղի մասնակիցները կամ բացառապես խաղի մասնակիցները: Որպես խաղի կազմակերպիչ կարող են հանդես գալ գործունեության տվյալ տեսակով զբաղվելու իրավունք ունեցող իրավաբանական անձինք: Տոտալիզատորի և շահումով խաղի մասնակիցներ կարող են լինել 21 տարին լրացած գործունակ կամ գործունակությունը չսահմանափակված ֆիզիկական անձինք, իսկ վիճակախաղի այլ տեսակների մասնակիցներ՝ 18 տարին լրացած անձինք: Կազմակերպիչները իրենց գործունեությունը կարող են ծավալել օրենքով նախատեսված վայրերում և պահպանել գործունեության տվյալ տեսակի համար օրենսդրությամբ սահմանված սահմանափակումները:

Առանց կազմակերպչի մասնակցության պայմանագրի կողմեր կարող են լինել միայն մասնակիցները, եթե խաղի տվյալ տեսակի կազմակերպումը իրենից լիցենզավորման ենթակա գործունեություն չի ներկայացնում կամ օրենքով այլ սահմանափակումներ նախատեսված չեն:

Հիմք ընդունելով իրավահարաբերության օբյեկտի վերաբերյալ ներկայումս ձևավորված բազմակարծության հայեցակարգը[12]՝ խաղերի և գրազի կազմակերպման իրավահարաբերության օբյեկտների շարքին կարելի է դասել այն նյութական բարիքները, որոնց կապակցությամբ շահագրգիռ սուբյեկտները մտնում են խաղի մեջ, ինչպես նաև խաղի պայմանի իրականացման դեպքում այդ նյութական բարիքների փոխանցման հետ կապված հարաբերությունները: Ինչպես քաղաքացիական օրենսգիրքը, այնպես էլ հատուկ օրենքները այդ օբյեկտները անվանում են շահումներ, իսկ որպես շահումներ կարող են հանդես գալ տարատեսակ նյութական բարիքները: Օրինակ՝ խաղատներում, բուքմեյքերական կետերում կամ ինտերնետ տոտալիզատորի կամ շահումով խաղի կազմակերպման դեպքում որպես շահում կարող են հանդես գալ դրամական միջոցները կամ այլ գույքը կամ գույքային իրավունքը: Այսինքն՝ բացառություն կարող են կազմել միայն շրջանառությունից հանված կամ սահմանափակ շրջանառություն ունեցող իրերը:

Խաղերի և գրազի կազմակերպման պարտավորությունների բովանդակությունն է կազմում կազմակերպչի և/կամ խաղի մասնակիցների սուբյեկտիվ իրավունքների և պարտականությունների ամբողջությունը:

Այն պարտավորություններում, որոնցում որպես կողմ հանդես են գալիս միայն մասնակիցները, ապա դրանց բովանդակությունն է կազ-

[12] Առավել մանրամասն տե՛ս **Клишас А. А.** Теория государства и права, 2019, https://be5.biz/pravo/t035/index.html

մում պարտված մասնակցի կողմից հաղթողին պայմանագրով սահմանված կարգով և ժամկետում շահումը հանձնելը, որին հակադրվում է հաղթող մասնակցի՝ պարտված մասնակցից շահումը պահանջելու իրավունքը: Մինչ շահողի որոշման փաստի արձանագրումը բոլոր մասնակիցները միմյանց նկատմամբ օգտվում են պայմանագրով սահմանված կարգով և ժամկետում շահումը պահանջելու իրավունքից, իսկ շահման փաստը հաստատվելուց հետո շահող մասնակիցը վերածվում է պարտատիրոջ և ձեռք է բերում սուբյեկտիվ պահանջի իրավունք, իսկ պարտվող մասնակիցը վերածվում է պարտապանի՝ ստանձնելով շահումը հանձնելու պարտականություն:

Որոշակի առանձնահատկություններ ունեն այն պարտավորությունները, որոնցում որպես պայմանագրի կողմեր հանդես են գալիս խաղի կազմակերպիչը և խաղի մասնակիցը:

Նման հարաբերություններում նախքան խաղի կամ գրազի կազմակերպման մասին պայմանագրի կնքումը ինչպես կազմակերպիչը, այնպես էլ մասնակիցը կրում են որոշակի պարտավորություններ: Մասնավորապես կազմակերպչի՝ պայմանագիր կնքելու մասին առաջարկը պետք է պայմաններ ներառի խաղերի անցկացման ժամկետի, շահումը որոշելու կարգի և դրա չափի մասին: Համացանցի միջոցով խաղի կազմակերպման դեպքում կազմակերպիչը պետք է սահմանի ինտերնետային կայքից օգտվելու կանոնները, սահմանված կարգով իրականացնի մասնակիցների նույնականացում, խաղային ծրագրերի համապատասխանեցում օրենսդրությամբ սահմանված նվազագույն ստանդարտներին:

Բացի այդ, խաղի կամ գրազի կազմակերպման մասին պայմանագիրը, հիմնականում հանդիսանալով միանալու պայմանով պայմանագիր, կրում է միակողմանի բնույթ: Այսինքն՝ դրանց կնքման, մասնակցի կողմից խաղադրույքը կատարելու պահից սկսած՝ մասնակիցը կազմակերպչի հանդեպ որևէ պարտավորություն չունի և կազմակերպչի նկատմամբ ձեռք է բերում որոշակի իրավունքներ:

ՀՀ օրենսդրությամբ խաղի կազմակերպչի համար սահմանվում են մի շարք պարտականություններ: Մասնավորապես նրա հիմնական պարտականությունը շահումը հանձնելն է: Քաղաքացիական օրենսգրքի 1040 հոդվ. 5-րդ մասի համաձայն՝ խաղի կազմակերպիչը վիճակախաղ, տոտալիզատոր կամ այլ խաղեր անցկացնելու կանոններին համապատասխան շահած անձանց պետք է վճարի նրանց շահումը՝ խաղեր անցկացնելու կանոններով նախատեսված չափով, ձևով (դրամով կամ բնեղենով) և ժամկետում, իսկ եթե այդ կանոններում ժամկետը նշված չէ, ապա խաղերի արդյունքները որոշելու պահից ոչ ուշ, քան տասն օրում, իսկ «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվ. 2-րդ մասի «զ» և «-Վիճակախաղերի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվ. 1-ին մասի «զ» կետերը

սահմանում են խաղացողի/շահողի առաջին իսկ պահանջով շահումը հանձնելու կազմակերպչի պարտականությունը:

Վիճակախաղի կազմակերպիչը իրային շահումների խաղարկման դեպքում վիճակախաղի շահող մասնակցին պարտավոր է տեղեկացնել այդ իրային շահմանը համարժեք դրամական չափի մասին և շահողի ցանկությամբ տրամադրել դրամական շահումը, շահման փաստը և արժեքը հրապարակել միայն շահողի համաձայնությամբ, բացառությամբ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի («Վիճակախաղերի մասին» ՀՀ օրենք, հոդվ. 5):

Խաղատան կամ խաղասրահի կազմակերպիչը ապահովում է խաղասրահում խաղանիշերի (ժետոնների) փոխանակումը միայն կանխիկ հայկական դրամով, բանկային քարտով կամ բանկային պրակտիկայում ընդունված այլ վճարային փաստաթղթերով, իսկ ինտերնետ շահումով խաղի կազմակերպիչը շահումը փոխանցում է հայկական դրամով՝ փոխանցելով խաղացողի բանկային հաշվին, բանկային քարտին կամ բանկային պրակտիկայում ընդունված այլ վճարային միջոցներին: Արգելվում է շահումը փոխանցել այն հաշիվներին, որոնցից չեն կատարվել մասնակցության համար նախատեսված վճարները, ինչպես նաև արգելվում են անմիջականորեն (խաղասրահի միջոցով) ինտերնետ շահումով խաղերի կազմակերպման դեպքում մասնակցության համար նախատեսված վճարների ընդունումը և շահումների տրամադրումը կանխիկ գումարով («Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» ՀՀ օրենք, հոդվ. 6):

Նշված հարաբերություններում որոշակի առանձնահատկություններ ունեն շահումը հանձնելու պարտավորության կատարման վայրին և ձևին ներկայացվող պահանջները: Մասնավորապես, վիճակախաղի կազմակերպիչը իրային շահումների խաղարկման դեպքում պարտավոր է նախապես հայտնել իրային շահումը հանձնելու վայրը, իսկ ինտերնետ տոտալիզատորի և շահումով խաղերի կազմակերպիչները պարտավոր են շահումը փոխանցել այն հաշիվներին, որոնցից կատարվել են մասնակցության համար նախատեսված վճարները, իսկ անմիջականորեն (խաղասրահի միջոցով) ինտերնետ շահումով խաղերի կազմակերպման դեպքում մասնակցության համար նախատեսված վճարների ընդունումը և շահումների տրամադրումը կանխիկ գումարով արգելվում են:

Հարկ է նշել, որ ՀՀ օրենսդրությամբ ինտերնետ տոտալիզատորի և շահումով խաղի կազմակերպման դեպքում շահումը հանձնելու հետ կապված հարաբերությունները հստակ կարգավորված չեն, իսկ պրակտիկայում կազմակերպիչները փորձում են այդ հարաբերությունները կարգավորել խաղերի կազմակերպման կանոնակարգերով[13], որպիսի

[13] Այդ մասին առավել մանրամասն տե՛ս https://rules.totogaming.am/?l=hy&m=4077

հանգամանքը գործնականում առաջացնում է մի շարք խնդիրներ: Մասնավորապես, ինտերնետ տոտալիզատորի և շահումով խաղի մասնակցելու համար մասնակիցը նախ պարտավոր է գրանցվել կազմակերպչի կայքում, նույնականացվել, որից հետո նրա խաղային հաշվին մուտքագրված դեպոզիտ վճարների հաշվին խաղային հաշվում արտացոլվում են համապատասխան միավորներ, որպիսիք հավաստում են այդ միավորների՝ դրամի փոխարկման բանաձևին համապատասխան կազմակերպչի նկատմամբ խաղացողի ունեցած պահանջի իրավունքը: Բուն խաղի ընթացքում խաղադրույքների կատարումը և շահումների տրամադրումը իրականացվում են խաղային հաշվի վրա առկա միավորները նվազեցնելու ու ավելացնելու միջոցով, և գործնականում օրենքով սահմանված շահումների վճարման գործընթացը օրենքով սահմանված տրամաբանությամբ չի ընթանում: Այլ դրամային հարաբերությունների բախվում ենք այն ժամանակ, երբ հաշվի օգտատերը կազմակերպչին ներկայացնում է իր հանդեպ ունեցած դրամական պարտավորությունը կատարելու պահանջ: Նման իրավիճակում կազմակերպիչները հնարավորություն են ստանում շրջանցել օրենքով նախատեսված վերը նշված սահմանափակումները և, ըստ էության, շահումի վճարման վերը նշված օրենսդրական սահմանափակումները գործնականում ձեռք են բերում ձևական բնույթ: Այս առումով գտնում ենք, որ անհրաժեշտ է գոյություն ունեցող փաստական հարաբերությունները ենթարկել իրավական հստակ կարգավորման և վերահսկողության, ինչը թույլ կտա հասնել այն նպատակներին որոնք սահմանվել են օրենսդրական վերը նշված սահմանափակումները նախատեսելիս:

Բացի այդ, առաջարկում ենք ՀՀ օրենսդրությամբ նախատեսել կազմակերպչի կողմից պատասխանատու խաղի կազմակերպման միջազգային պրակտիկայում կիրառվող կանոններ[14], որոնք թույլ կտան պաշտպանել խաղի մասնակիցների գույքային շահերը, օրինակ՝ պետք է ներդնել օրական դեպոզիտների առավելագույն շեմեր, խաղացողի՝ խաղին տարբեր ձևերով մասնակցելու ինքնասահմանափակման և ինքնաբացառման պարտադիր կանոններ, հոգեբանական աջակցության կարիք ունեցող անձանց նման ծառայություններից անվճար օգտվելու հնարավորություններ և այլն, ինչպես նաև խիստ սանկցիաներ, ինչը հնարավորություն կտա զսպելու խաղամոլության տարածումը, պաշտպանելու այս հարաբերությունների թույլ կողմի՝ խաղացողների շահերը:

Իրավագիտությանը դեռևս Հռոմեական իրավունքից հայտնի է պարտավորությունների հայցային կամ ցիվիլ (obligationes civiles) և բնական կամ նատուրալ (obligationes naturalis) պարտավորությունների դասակարգումը[15]: Այս դասակարգման համար որպես չափորոշիչ ծա-

---

&s=6719, https://sport.vbet.am/#/, https://www.adjarabet.am/hy/Rules/2 կայքերում:

[14] Այդ մասին առավել մանրամասն տե՛ս, օրինակ, GLI ստանդարտները, https://gaminglabs.com/gli-standards/:

[15] Տե՛ս **Վ. Դ. Ավետիսյան**, Հռոմեական մասնավոր իրավունք, Եր., 2015, էջ 83:

ռայում է այն հանգամանքը, թե կոնկրետ պարտավորությունից ծագող պահանջի իրավունքը հայցային պաշտպանությունից օգտվում է, թե ոչ: Այն պարտավորությունները, որոնցից բխող պահանջի իրավունքը դատական պաշտպանության ենթակա չէ, դասվում են բնական կամ նատուրալ պարտավորությունների շարքին, իսկ այն պարտավորությունները, որոնցից բխող պահանջի իրավունքը ենթակա է դատական պաշտպանության, դասվում են հայցային կամ ցիվիլ պարտավորությունների շարքին: Նատուրալ պարտավորությունների առանձնահատկությունն այն է, որ այդ պարտավորությունների կատարման հանգամանքը բացառապես կախված է պարտապանի կամքից, և պետությունը դրա հարկադիր կատարման նկատմամբ որևէ հետաքրքրություն չունի: Պարտատերը իրավունք չունի դատական կարգով պարտապանին հարկադրելու կատարել ստանձնած պարտականությունը, և այդ պարտականությունների չկատարման դեպքում պարտապանի նկատմամբ որևէ սանկցիա կիրառվել չի կարող: Իսկ հայցային պարտավորությունների դեպքում պարտապանի կողմից պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում պարտատերը կարող է օգտվել խախտված իրավունքի դատական պաշտպանության հնարավորությունից, ինչպես նաև անբարեխիղճ պարտապանի նկատմամբ կարող են կիրառվել որոշակի սանկցիաներ: Նատուրալ պարտավորությունների պարագայում, պարտապանի կողմից պարտավորությունը կամավոր կատարելու պահից սկսած, պարտապանը կատարածը պարտատիրոջից որպես անհիմն հարստացում չի կարող հետ պահանջել:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1039-րդ հոդվ. համաձայն՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց պահանջները՝ կապված ռիսկի վրա հիմնված խաղեր և գրազ (մոլեխաղեր)[16] կազմակերպելու կամ դրանց մասնակցելու հետ, ենթակա չեն դատական պաշտպանության, բացառությամբ այն անձանց պահանջների, ովքեր խաղերին կամ գրազին մասնակցել են խաբեության, բռնության, սպառնալիքի կամ իրենց ներկայացուցչի՝ խաղերի կամ գրազի կազմակերպչի հետ չարամիտ համաձայնության ազդեցության ներքո, ինչպես նաև սույն օրենսգրքի 1040 հոդվածի 5-րդ կետում նշված պահանջների:

Օրենքի այս նորմի մեկնաբանությունից կարելի է եզրահանգել, որ ընդհանուր կանոնի համաձայն՝ ռիսկի վրա հիմնված խաղեր և գրազ (մոլեխաղեր) կազմակերպելու կամ դրանց մասնակցելու հետ կապված պարտավորությունները հիմնականում դատական պաշտպանությունից չեն օգտվում և հանդիսանում են նատուրալ պարտավորություններ, ինչը, մեր կարծիքով, այս նորմի, մեղմ ասած, թերի, տարածական

[16] «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով նախատեսված ածանցյալ ֆինանսական գործիքների վրա հիմնված պահանջները չեն համարվում ռիսկի վրա հիմնված խաղեր կամ գրազ (մոլեխաղեր), նույնիսկ եթե դրանք պարունակում են խաղերին և (կամ) գրազին (մոլեխաղերին) բնորոշ կամ համանման պայմաններ:

մեկնաբանությունների տեղիք տվող ձևակերպման արդյունք է, անհարկի սահմանափակում է այս հարաբերություններին առնչվող տասնյակհազարավոր սուբյեկտների իրավունքների պաշտպանության հնարավորությունը: Բանն այն է, որ այդ հարաբերությունների մասնակիցների իրավունքների պաշտպանության արտադատական գործող միջոցները հիմնականում կրում են ձևական բնույթ, ինչը համահունչ չէ արագ զարգացող այս հարաբերություններին:

Գործող օրենքի ձևակերպումից ենթադրվում է, որ վերը նշված սահմանափակումը վերաբերում է ռիսկի վրա հիմնված խաղերի և գրազի (մոլեխաղերի) կազմակերպմանը կամ դրանց մասնակցելուն առնչվող բոլոր սուբյեկտներին՝ մոռացության մատնելով այն հանգամանքը, որ նշված հարաբերությունների մի մեծ խումբ կազմակերպվում է գործունեության տվյալ տեսակով զբաղվելու լիցենզիա ստացած սուբյեկտների կողմից, ինչը պետության համար ապահովում է խոշոր եկամուտներ, և ենթադրվում է, որ այդ հարաբերությունների մասնակիցների իրավունքների պաշտպանության հնարավորությունները պետք է կրեն համապարփակ բնույթ, այդ թվում՝ այդպիսիք իրավունքի պաշտպանության վարչական միջոցները սպառելուց հետո պետք է օգտվեն նաև դատական պաշտպանության հնարավորությունից: Իսկ սահմանափակումները պետք է վերաբերեն միայն ֆիզիկական անձանց կողմից մոլեխաղերի կազմակերպմանը, ինչպես նաև առանց համապատասխան լիցենզիայի իրավաբանական անձանց՝ միմյանց, ինչպես նաև իրավաբանական անձանց և ֆիզիկական անձանց միջև առաջացող հարաբերություններին: Թիվ 3-377(ՎԴ) 2008 թ. քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանը արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1039-րդ հոդվածից հետևում է, որ ռիսկի վրա հիմնված խաղեր և գրազ (մոլեխաղեր) կազմակերպելու կամ դրանց մասնակցելու հետ կապված պահանջները ենթակա չեն դատարանում քննության, և միայն բացառիկ դեպքերում դատարանը կարող է քննել այս ոլորտում ծագող վեճերը: Մասնավորապես, դատարանում քննության ենթակա են այն անձանց պահանջները, ովքեր խաղերին կամ գրազին մասնակցել են խաբեության, բռնության, սպառնալիքի կամ իրենց ներկայացուցչի՝ խաղերի կամ գրազի կազմակերպչի հետ չարամիտ համաձայնության ազդեցության ներքո: Բացի այդ, դատարանին են ենթակա խաղի կազմակերպչի կողմից շահումը վճարելուց խուսափելու հետ կապված վեճերը, հետևաբար խաղի հաղթող ճանաչելու հետ կապված վեճերը, այդ թվում խաղի կանոններին համապատասխան դրանց անցկացված լինելու հարցերը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1039-րդ և 1040-րդ հոդվածների ուժով դատարանի իրավասությունից դուրս են, իսկ դրանք կազմակերպող և դրանց մասնակցող անձանց պահանջները՝ դատական պաշտպանութ-

յան ոչ ենթակա[17]: Նշված դիրքորոշումը, մեր կարծիքով, հիմնավոր չէ, քանի որ շահումը վճարելու պահանջը, որի փաստական հիմքն է շահող հանդիսանալու հանգամանքը՝ որպես հայցի հիմքում ընկած և գործով ապացուցման ենթակա հանգամանքների փաստակազմ, հանդիսանալու են խաղի հաղթող ճանաչելու, այդ թվում խաղի կանոններին համապատասխան դրանց անցկացված լինելու հարցերը: Նման դիրքորոշման պայմաններում գործնականում շահումը վճարելու պահանջի հետ կապված վեճերի քննությունը կարող է մտնել փակուղի և շահողին գործնականում զրկել շահումը վճարելու, ինչպես նաև խաղի կազմակերպչի կողմից շահումի վճարման հետ չկապված այլ պարտականությունների կատարմանը հարկադրելու պահանջներ ներկայացնելու հնարավորությունից:

Այսպիսով, ընդհանուր կանոնի համաձայն, խաղերի և գրազի կազմակերպման հետ կապված հարաբերությունները գործնականում զրկված են դատական պաշտպանության հնարավորությունից, սակայն այդ հարաբերությունների մասնակիցները զրկված չեն այդ իրավունքների արտադատական պաշտպանության հնարավորությունից, այդ թվում իրավունքի ինքնապաշտպանության հնարավորությունից:

Այնուամենայնիվ, չնայած վերը նշված խնդիրներին, խաղերի և գրազի կազմակերպման և դրանց մասնակցության հետ կապված հարաբերությունները օրենքով նախատեսված կոնկրետ դեպքերում օգտվում են դատական պաշտպանության հնարավորությունից: Այդ բացառիկ դեպքերի թվին են դասվում այն անձանց պահանջները, ովքեր խաղերին կամ գրազին մասնակցել են խաբեության, բռնության, սպառնալիքի կամ իրենց ներկայացուցչի՝ խաղերի կամ գրազի կազմակերպչի հետ չարամիտ համաձայնության ազդեցության ներքո, ինչպես նաև խաղերի կազմակերպչի կողմից վիճակախաղի, տոտալիզատորի կամ այլ խաղերի անցկացման կանոններին համապատասխան շահումը վճարելու պարտականությունը չկատարելը:

Խաղի կազմակերպիչ չունեցող մնացած բոլոր դեպքերում խաղերի և գրազի կազմակերպման հետ կապված հարաբերությունները, ինչպես նաև դրանցից բխող պահանջի իրավունքը դասվում են նատուրալ պարտավորությունների շարքին, այդպիսիք դատական պաշտպանությունից և իրավական հարկադրման այլ միջոցներից չեն օգտվում, նման պարտավորությունները չկատարած պարտապանների նկատմամբ որևէ սանկցիա կիրառվել չի կարող:

Ամփոփելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ խաղերի և գրազի (մոլեխաղերի) կազմակերպման կամ դրանց մասնակցության հետ կապված հարաբերությունները Հայաստանի Հանրապետությունում պատշաճ կերպով կարգավորված չեն, խաղամոլության տարածվածության և վե-

[17] Տե՛ս թիվ 3-377(ՎԴ) 2008 թ. քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի՝ 2008 թ. հունիսի 20-ին կայացրած որոշումը:

բացման հստակ մեխանիզմները բացակայում են, խաղերի կազմակերպիչների և խաղի մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները հավասարակշված չեն, տվյալ հարաբերությունների մասնակիցների իրավունքների դատական և արտադատական պաշտպանության միջոցները ունեն կատարելագործման անհրաժեշտություն, իսկ գործող օրենսդրությունը համահունչ չէ ոլորտի միջազգային չափորոշիչներին, որպիսի հանգամանքը օր առաջ պետք է դառնա պատկան մարմինների քննարկման առարկա, և տրվեն առկա խնդիրների խելամիտ լուծումներ:

ВАГРАМ АВЕТИСЯН – ***Проблемы правового регулирования организации игр и пари в Республике Армения.*** **–** Статья посвящена выявлению существующих проблем правового регулирования отношений, связанных с организацией азартных игр в Республике Армения, правовой природе договора об организации азартных игр, анализу прав и обязанностей организаторов и участников азартных игр, проблеме судебной защиты прав и обязанностей организаторов и участников азартных игр, а также обсуждению некоторых вопросов, связанных с предотвращением пристрасия к азартным играм.

Ключевые слова: *договор ставки (азартные игры), тотализатора и лотереи, права и обязанности организатора игры, права и обязанности участников игры, проблемы судебной защиты, ответственная игра*

VAHRAM AVETISYAN – ***The Problems of Legal Regulation of the Organization of Games and Betting in the Republic of Armenia.*** **–** The article is devoted to identifying the existing problems of legal regulation of relations connected with the organization of gambling in the Republic of Armenia, the legal nature of the agreement on the organization of gambling, analysis of the rights and obligations of organizers and participants in gambling, the problem of judicial protection of the rights and obligations of the organizers and participants of gambling, as well as discussion of some issues related to the prevention of addiction to gambling.

Key words: *betting (gambling), sweepstakes and lottery agreements, rights and obligations of the game organizer, rights and obligations of game participants, problems of judicial protection, responsible gambling*